

# Հայկական լուրեր

## ԱՍԱԲԱԶԱՐԻ ԴԵՊՔԻՆ ՃՈՒՐՁ

Ատարազարի Յորելինական հանդէսներուն առթիւ պատահած դէպքին մասին, ինչպէս երէկ գրած էինք, Պատրիարքարանի կողմէ հեռագրով վաւերական տեղեկութիւններ ուղուած էին: Հակառակ անոր որ Ատարազարը մեր քթին տակն է, այսու հանդերձ ո՛ր է պատասխան կարելի եղած չըլլալով առնել, Պատրիարքարանը երէկ կրկին հեռագիր մը գրկեց, ստիպողաբար մանրամասնութիւններ ուղեկով:

Հետեւաբար, Պատրիարքարանը ո՛ր է պաշտօնական տեղեկութիւն չունի. միայն հաստատ ըլլալով թուրք ոստիկան-գինուորի մը սպանութիւնը և մէկ քանի ոստիկաններու վիրաւորումը, Տեղապահ Ս. Շ. երէկ Յորելեանի առթիւ ներկայացուցիչ գրկելուն համար նախարարներուն շնորհակալութեան այցելութիւն տուած պահուն, դատական նախարարին յանուն ազգին ցաւ յայտնել է պատահած դէպքին համար և խնդրել է որ այս պատճառաւ ձեռք առնուած խուսափումները մեղմացուցուին, Ատարազարցի հայերուն անտեսապէս վրնասուելուն տեղի չտալու համար:

Երէկ ցերեկին Պոլսերնակ Ատարազարցիներու պատուիրակութիւն մը ներկայացաւ Տեղապահ Սրբազանին և յայտնեց թէ հակառակ անոր որ գրեթէ ամէն անգամ Հայտար-Փայայի կառախումբը ժամանած պահուն 100—130 ճամբորդ կուգար, երկու օրէ ի վեր մէկ ճամբորդ իսկ եկած չէ, ինչ որ նշան մը կրնայ նկատուիլ թէ Ատարազարէն ոչ ոքի թոյլ չարուիր դուրս ելլելու: Պատուիրակութիւնը խնդրեց որ պատկանեալ պաշտօնատան մօտ դիմում կատարուի՝ այսպիսի արգելքի մը, եթէ իրապէս չայ, վերցուելուն համար:

### ԶՐԿԱՆՔՆԵՐ ՄՇԵՅԻՆԵՐՈՒՆ

Մուսէն հետեւեալ պատճառով հեռագիրը հաւած է Պատրիարքարանի շուկ. 14 բուականով. —

Պիթիւնէն իրոյթ զրկուած Յանձնաժողովը խոչտանգումով ու սպառնալիքով հայերը քիւրտերուն պարտական ընելէ յետոյ հիմակուրնէ իրոյթի ոստիկանական պաշտօնեայ յիսնապետ Մէհմէտ էֆէնտին չքաւոր հայերուն օրապահիկը բռնի քաշելով քիւրտերուն կուտայ, հայերը մշակութիւնէ կ'արգիլէ. հայերը արտասուալից աչքով օգնութիւն կը խնդրեն. նաև սկսած են հոս հոն փախչիլ:

### ԻՆՉՊԷՍ ՄԷՋԷՆ ՊԻՏԻ ԵԼԼԷՔ

Յորելեանական կեդր. Յանձնախումբը հրաւիրած է թաղերու մասնախումբերը որ վաղը իրենց հաշիւները ներկայացնեն: Այս առթիւ թերեւս աւելորդ չըլլայ հարցնել կեդր. Յանձնաժողովին թէ ինչպէս այիտի կրնայ հաշիւներուն մէջէն ելլել, երբ իբր նուէր մէճիտ մը, երկու մէճիտ և կամ աւելի գումար մը տրուած է 3 դրչ. նոց Աւետարանի մը և զանազան նկարներու: Այս, եթէ ոչ-խրդճամիտ անձեր ստացուած 20, 40 և յաւելուածական դրչ. ներք գրպանին յնեն և միայն ծախուած իրեղէններուն փոխարժէքին չափ հասոյթ մը ցոյց տան, Յանձնաժողովը ինչպէս պիտի անդրադառնայ այս չարաչառութեան, քանի որ մենք աչքովն տեսնք ազնիւ անձեր որոնք 3 կամ 2 դրչ. նոց աւետարանի մը կամ պատկերի մը 20, 40 և մինչեւ իսկ 60 դրչ. նուիրեցին: Այս պարագան Յորելեանական կեդր. Յանձնախումբին խորին ուշադրութեանը կը ներկայացնենք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Նահանգներուն արտագաղթին դէմ միջոցներ ձեռք առնելու համար Ազգ. Վարչութեան կողմէ կազմուած էր ծանօթ անձնաւորութիւններէ Յանձնաժողով մը, որուն անդամ նշանակուած էին նաև կաթողիկ և Բողոքական յարանուանութեանց պատկանող անհատներ: Այդ Յանձնաժողովը ուրբաթ օրուան համար նիստի հրաւիրուած է Ղալաթիոյ իորհրդարանը:

ՏԵՂԱՊԱՆ Սրբազանը ընկերակցութեամբ Քաղաք. ժողովոյ անդամ Տիրան Երկանեան էֆ. ի և գործակատարին երէկ շնորհակալութեան այցելութիւն տուաւ նախարարներու, Յորելեանի հանդէսներուն անոնց զրկած ներկայացուցիչներուն և ուղղած շնորհաւորութիւններուն համար:

«ԿԻԹԱԿԱՆ ՖՕՆՏ»-ԻՆ ինպաստ ըլլալիք նուիրատուութիւնները հա-

ւաքելու պաշտօն ունեցող և Ազգ. ժողովին միաձայն հաւանութեամբ նշանակուած Յանձնաժողովը իր երկրորդ նիստը պիտի գումարէ վաղը, Ղալաթիոյ իորհրդարանին մէջ, առնապետութեամբ Վսեմ. Պատրիկ էֆ. կիւլպէնկեանի, որ սիրայօժար ընդունած է գործօն անդամակցութիւն մը ունենալ և կը խորհուի նոյն Յանձնաժողովին անդամակցելու հրաւիրել նաև Պարբիլ էֆ. Նորատունկեանը, եթէ մինչև տասը օր Պոլիս վերադառնայ, ինչպէս լսուած է: Նորատունկեան և կիւլպէնկեան էֆ. ներուն, ինչպէս նաև Յանձնաժողովին միւս անդամներուն ներկայութիւնը և մասնակցութիւնը մեծ գրաւական մըն է թէ կրթական «Ֆօնտ»-ին ինպաստ կատարուելիք նուիրահաւաքութիւնը յաջող և սպասուած արդիւնքը պիտի տայ:

